դարձեալ արեգակն ջերմացուցանէ զաշխարհս և հասուցանէ
զպտուղքն. նոյնպէս և սուրբ վարդապետս մեր զամենայն
մարդ յօժարեցուցանէր և ջերմացուցանէր ի տեսակս առա-
քինութեան աստուածայնոց և մարդկայնոց. զոմանս ի յու-
5 սումն, զոմանս ի պահք և աղաւթք, զոմանս ի յարթնութեան
և ի հսկումն զիշերային ժամուց, զոմանս ի լաց և յարտասուս,
զոմանս ի գութ և յողորմութիւն և յաղքատասիրութիւն և
յընկերասիրութիւն, զոմանս ի խոնարհութիւն, ի հեզութիւն
և յաստուածպաշտութիւն. և զամենայն մարդ կամէր կատա-
10 րեալ բարութեան հասուցանել և զանձն աւրինակ տայր ա-
մենեցուն ըստ հրամանացն Փրկչին, թէ որ առնէ և ուսու-
ցանէ, նա մեծ կոչեսցի յարքայութեան երկնից.† և սա միշտ
զայս ամենայն կատարէր։ Վասն որոյ կոչեաց զնա արքայն
երկնաւոր ի սեղան հաւր իւրոյ յանսպառ բարիս։ Վասն որոյ
15 Ի յատկութիւն կայ յարեգակն, եթէ առնուս և ոչ ձանձ-
բանաս ի սուրբ հայրս մեր համաքատակի և հաւասարի։ Եւ
շատ նեղութիւն և վիշտս կրեաց վասն Էջմիածնին և Կիրակոս
կաթուղիկոսին համար յանաւրինաց և ի սուտ եղբարց, և
բազում աշխատութիւնս կրեաց ինքն վարդապետն և իւր ա-
20 շակերտքն ի սրբել տաճարացն Էջմիածնին և Հռիփսիմին և
Գայիանին և ի շինութիւն պարսպացն, խցերուն և տանցն.

---

† Մատթ. Ե. 19

1) Ա. զլոյս արեգականն ջեր.. Բ. արեգակն եւ դ՞րձլ խ՞ւր ն՞ր. զլոյս ն՞ր ջերմ.. Դ. ջեռուցանէ

2) Ե. վա՞տն 3) Ա. տեզակս. Բ. ջերմացուցեր Ե. չ. եւ. ի

4) Ա. յ՞ածայնոց մդկանոց

5) Բ. զոմանք ի պահր, Գ. զոմանսն ի պահր եւ աղաւթք Ե. ի պաղ Ե չ. ի եւ յ նախդիրը Դ. յաղօթք

6) Ա. եւ ի հսկմունս Ե. զիշերաին Բե. արտասուս

7) Ա. չ. եւ յաղթ..

8) Ա. յընկերասիրուա՞ի Բ. յաղքատսիրութեանն եւ յնկերսիրութեանն (sic) զոմանս ի խոնարհութեանն. ի հեզուա՞ն եւ յ՞ածպաշտուա՞ն Ե. յաղքտսիրու՞թեն.. ի խոնուա՞ն (խոնարհութեան) ի հեզուա՞ն եւ յ՞ածպաշտուա՞ն

11) Ա. արասցէ.. Բ. թէ ոյ առնէ. Ե. թէ որ յառնէ

12) ԱԲ. յարքայութեանն Ե. արքաուա՞ն ա՞յ եւ սայ

13) Ա. զ՞ամ փ. զայս ամենայն 14) Ա. հօրն

15) Ա. կա արեգականն ԲԳԵ. ի արեգակն 16) Ե. հարսն

17) ԲԵ. եւ շատ փ. եւ բազում. Ե. նեղուա՞ին Ա. յէջմիածնին

18) ԲԳԵ. ի յանօրինաց 19) Դ. աշխատանք

20) Ա. զտաճրն Բ. զտա՞ճրցն Ե. տա՞ճրին ԱԲ. յէջմիածնին Ա. չ. եւ

21) Գ. ի շինութիւնն Դ. խցներուն